ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մարտի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2021 թվականի փետրվարի 8-ի №04/11.2/655-2021 գրությամբ ներկայացված տեղեկությունն առ այն, որ հետազոտումների արդյունքում 890-902.5ՄՀց հաճախականային շերտով արձանագրվել են կողմնակի ազդանշաններ, որոնց ճառագայթման աղբյուրը գտնվում է Երևան քաղաքի Արամի 3 հասցեում՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող ,Սիլ Պլազաե կենտրոնում,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի փետրվարի 11-ի №ՍԾ/34.2-Մ2-9/407-2021 գրությունը,

գ) Ընկերության 2021 թվականի փետրվարի 18-ի №07/2-ՊՏ21-289 գրությունը, որով հայտնել է, որ 2021 թվականի հունվարի 18-ին տեղեկանալով սարքի օգտագործման պատճառով բջջային կապի խանգարումների և դրա օգտագործման անթույլատրելիության մասին՝ դադարեցրել է բջջային կապի վերահաղորդիչ սարքի օգտագործումը, միաժամանակ խնդրելով չարձակել դադարեցման կարգադրություն՝ սարքի օգտագործումը դադարեցված լինելու պատճառով,

դ) որ իրավասու պետական մարմնի և Ընկերության ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Ընկերության կողմից առանց թույլտվության 901.4ՄՀց կենտրոնական ռադիոհաճախականության (45ՄՀց թողարկման շերտով) օգտագործումը:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ դադարեցման կարգադրություն չարձակելու խնդրանքին, ապա ,Էլեկտրոնային հաղորդակցության մասինե օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե Հանձնաժողովը որոշում է, որ բողոքի առարկա գործողությունները տեղի չեն ունեցել, ապա դադարեցման մասին կարգադրություն չի արձակվում, մինչդեռ տվյալ պարագայում Ընկերությունը հայտնել էր, որ դադարեցրել է սարքի օգտագործումը՝ վերջինիս պատճառով առաջացած խանգարումների և օգտագործման անթույլատրելիության մասին տեղեկանալուց հետո, ինչը հավաստում է, որ Ընկերության կողմից քննարկվող գործողությունները (առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործում) տեղի են ունեցել, և

հիմք ընդունելով ,Էլեկտրոնային հաղորդակցության մասինե օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ,ժդե ենթակետը, 3-րդ կետի ,եե ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 901.4ՄՀց կենտրոնական ռադիոհաճախականության (45ՄՀց թողարկման շերտով) օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2021թ.